ՏԵՂԵԿԱՆՔ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐԻ

Հոդված 172. Ծառայողական և առևտրային գաղտնիքի ստացումը և պահպանումը

(վերնագիրը լրաց. 14.12.04 ՀՕ-28-Ն)

1. Քրեական դատավարության ընթացքում ձեռնարկվում են ծառայողական, առևտրային և օրենքով պահպանվող այլ գաղտնիք պարունակող տեղեկությունների պահպանման՝ օրենքով նախատեսված միջոցներ:

2. Դատավարական գործողություններ կատարելիս առանց անհրաժեշտության չպետք է հավաքվեն, պահվեն, օգտագործվեն և տարածվեն ծառայողական, առևտրային և օրենքով պահպանվող այլ գաղտնիք պարունակող տեղեկություններ: Դատարանի, ինչպես նաև հետաքննության մարմնի, քննիչի, դատախազի պահանջով քննչական և դատական գործողությունների մասնակիցները պարտավոր են չհրապարակել նշված տեղեկությունները, որի համար նրանցից վերցվում է ստորագրություն:

3. Անձինք, որոնց քրեական վարույթն իրականացնող մարմինն առաջարկում է սույն օրենսգրքի դրույթներին համապատասխան հաղորդել կամ ներկայացնել օրենքով պահպանվող գաղտնիք պարունակող տեղեկություններ, չեն կարող վկայակոչելով ծառայողական, առևտրային և օրենքով պահպանվող այլ գաղտնիքի պահպանման անհրաժեշտությունը, հրաժարվել այդ պահանջը կատարելուց, սակայն իրավունք ունեն դատարանից, դատախազից, քննիչից, հետաքննության մարմնից նախապես ստանալ նրանց կողմից նշված տեղեկություններ ստանալու անհրաժեշտությունը հաստատող, համապատասխան քննչական կամ դատավարական գործողության արձանագրության մեջ արտացոլման ենթակա պարզաբանում:

3.1. Քրեական հետապնդում իրականացնող մարմինները նոտարական գաղտնիք կազմող տեղեկությունները կարող են ստանալ դատարանի որոշման հիման վրա:

3.2. ~~Քրեական հետապնդում իրականացնող մարմինները քրեական գործով կասկածյալ կամ մեղադրյալ ներգրավված անձանց վերաբերյալ բանկային գաղտնիք կազմող տեղեկությունները, «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից արժեթղթերի հետ կատարված գործարքների վերաբերյալ ծառայողական տեղեկությունները, ինչպես նաև ապահովագրական գաղտնիք կազմող տեղեկությունները կարող են ստանալ խուզարկության կամ առգրավման վերաբերյալ դատարանի որոշման հիման վրա:~~

Հարուցված քրեական գործերով դատարանը պատճառաբանված որոշմամբ բավարարում է բանկային գաղտնիք կազմող տեղեկություններ, «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից արժեթղթերի հետ կատարված գործարքների վերաբերյալ ծառայողական տեղեկություններ, ինչպես նաև ապահովագրական գաղտնիք կազմող տեղեկություններ ստանալու նպատակով առգրավում կամ խուզարկություն կատարելու թույլտվություն տալու քրեական հետապնդում իրականացնող մարմնի միջնորդությունը, եթե դրանք վերաբերում են՝

1) կասկածյալին.

2) մեղադրյալին.

3) այն ֆիզիկական անձին, որի կապակցությամբ առկա է հիմնավոր ենթադրություն այն մասին, որ նրա և սույն մասի 1-ին կամ 2-րդ կետով նշված անձի միջև առկա է անմիջական կապ, և նրա վերաբերյալ այդ տեղեկություններն ուղղակիորեն առնչվում են սույն մասի 1-ին կամ 2-րդ կետով նշված անձին վերագրվող արարքին.

4) այն իրավաբանական անձին, որի կապակցությամբ առկա է հիմնավոր ենթադրություն այն մասին, որ դրա գործունեությունն ամբողջությամբ կամ վերաբերելի մասով կառավարվում, վերահսկվում կամ որևէ կերպ փաստացի ուղղորդվում է սույն մասի 1-ին կամ 2-րդ կետով նշված անձի կողմից, և դրա վերաբերյալ այդ տեղեկություններն ուղղակիորեն առնչվում են սույն մասի 1-ին կամ 2-րդ կետով նշված անձին վերագրվող արարքին:

3.3. Քրեական հետապնդում իրականացնող մարմինները վարկային բյուրոյից վարկային տեղեկատվություն կամ վարկային պատմություն կարող են ստանալ միայն դատարանի որոշման հիման վրա:

3.4. Սույն հոդվածի 3.2-րդ մասով սահմանված կանոնները չեն գործում Կենտրոնական դեպոզիտարիայի և արժեթղթերի սեփականատերերի (անվանատերերի) ռեեստրի վարման իրավունք ունեցող այլ անձանց կողմից հաճախորդի բացած արժեթղթերի հաշիվների ցանկի, յուրաքանչյուր հաշվի տեսակի և կարգավիճակի վերաբերյալ ծառայողական տեղեկությունների, ինչպես նաև բաժնետոմսերի և բաժնետոմսերի սեփականատերերի (անվանատերերի) վերաբերյալ ծառայողական տեղեկությունների տրամադրման առնչությամբ: Սույն մասով նախատեսված տեղեկությունները քրեական հետապնդում իրականացնող մարմիններն ստանում են «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 98-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետով նախատեսված կարգով:

4. Ծառայողական, առևտրային և օրենքով պահպանվող այլ գաղտնիք պարունակող, իրեն վստահված տեղեկությունների վերաբերյալ ցուցմունքներ տվող պետական ծառայողը և անկախ սեփականության ձևից՝ ձեռնարկության, հիմնարկի կամ կազմակերպության աշխատողն այդ մասին գրավոր հաղորդում է համապատասխան ղեկավարին, եթե դա նրան ուղղակիորեն չի արգելում վարույթն իրականացնող մարմինը:

5. Ծառայողական, առևտրային և օրենքով պահպանվող այլ գաղտնիք պարունակող տեղեկությունների վերաբերյալ ապացույցներն այն անձանց պահանջով, որոնց

սպառնում է նշված տեղեկությունների հրապարակումը, կարող են հետազոտվել դռնփակ դատական նիստում:

(172-րդ հոդվածը լրաց. 14.12.04 ՀՕ-28-Ն, փոփ., լրաց. 27.02.07 ՀՕ-114-Ն, 22.10.08 ՀՕ-196-Ն, 24.06.10 ՀՕ-103-Ն, խմբ. 21.06.14 ՀՕ-115-Ն, լրաց. 03.06.20 ՀՕ-308-Ն)

Հոդված 262. Քննիչի գործողությունները քրեական գործով վարույթը կարճելուց և քրեական հետապնդումը դադարեցնելուց հետո

1. Քննիչը կասկածյալին, մեղադրյալին, պաշտպանին, ինչպես նաև տուժողին, նրա ներկայացուցչին, քաղաքացիական հայցվորին, քաղաքացիական պատասխանողին կամ նրանց ներկայացուցիչներին, ինչպես նաև այն ֆիզիկական անձին կամ իրավաբանական անձի ներկայացուցչին, որոնց հայտարարության հիման վրա հարուցվել է քրեական գործը, պատշաճ ծանուցմամբ անհապաղ ուղարկում է քրեական գործով վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշումը՝ պարզաբանելով գործի նյութերին ծանոթանալու նրանց իրավունքը և որոշման բողոքարկման կարգը և ժամկետները:

1.1. Եթե հետաքննության կամ նախաքննության ընթացքում սույն օրենսգրքի 172-րդ հոդվածի 3.2-րդ մասով սահմանված կարգով տեղեկություններ են հավաքվել դատավարության մասնակից չհանդիսացող անձի վերաբերյալ, ապա քննիչը նրան հայտնում է այդպիսի տեղեկություններ պարունակող գործի նյութերին ծանոթանալու՝ նրա իրավունքի մասին, բացառությամբ երբ դրանց կապակցությամբ նոր քրեական գործ է հարուցվել:

2. ***(մասն ուժը կորցրել է 04.05.18 ՀՕ-315-Ն)***

3. Սույն հոդվածի առաջին մասում նշված անձինք իրավունք ունեն սույն օրենսգրքով սահմանված կարգով ծանոթանալ կարճված գործի նյութերին:

(262-րդ հոդվածը լրաց. 25.05.06 ՀՕ-91-Ն, խմբ., փոփ. 04.05.18 ՀՕ-315-Ն)

Հոդված 265. Մեղադրական եզրակացություն կազմելուց առաջ գործի նյութերին ծանոթացնելը

1. Մեղադրական եզրակացություն կազմելու համար հավաքված ապացույցները բավարար համարելով՝ քննիչն այդ մասին հաղորդում է մեղադրյալին, պաշտպանին, ինչպես նաև տուժողին, նրա ներկայացուցչին, քաղաքացիական հայցվորին, քաղաքացիական պատասխանողին կամ նրանց ներկայացուցիչներին և որոշում է գործի նյութերի հետ նրանց ծանոթանալու ժամանակը և տեղը:

1.1. Եթե հետաքննության կամ նախաքննության ընթացքում սույն օրենսգրքի 172-րդ հոդվածի 3.2-րդ մասով սահմանված կարգով տեղեկություններ են հավաքվել դատավարության մասնակից չհանդիսացող անձի վերաբերյալ, ապա քննիչն այդ

մասին հաղորդում է նրան և որոշում այդպիսի տեղեկություններ պարունակող գործի նյութերին նրա ծանոթանալու ժամանակը և տեղը, բացառությամբ երբ դրանց կապակցությամբ նոր քրեական գործ է հարուցվել:

2. Տուժողին, քաղաքացիական հայցվորին, քաղաքացիական պատասխանողին քննիչը ծանոթանալու համար գործը ներկայացնում է նրանց միջնորդության դեպքում, իսկ մեղադրյալին և պաշտպանին՝ անկախ միջնորդությունից:

3. Եթե մեղադրյալի պաշտպանը կամ տուժողի, քաղաքացիական հայցվորի, քաղաքացիական պատասխանողի ներկայացուցիչը չի կարող ներկայանալ նշանակված ժամին, քննիչը ծանոթանալը հետաձգում է մինչև 5 օր ժամկետով: Տվյալ ժամկետում պաշտպանի կամ ներկայացուցչի չներկայանալու դեպքում մեղադրյալին հնարավորություն է ընձեռվում իր համաձայնությամբ կամ նշանակմամբ ունենալու այլ պաշտպան, իսկ տուժողին, քաղաքացիական հայցվորին, քաղաքացիական պատասխանողին՝ այլ ներկայացուցիչ:

3.1. Եթե սույն հոդվածի 1.1-ին մասով սահմանված՝ դատավարության մասնակից չհանդիսացող անձը չի կարող ներկայանալ նշանակված ժամին, քննիչը ծանոթանալը հետաձգում է մինչև 2 օր ժամկետով:

Հոդված 268. Գործի նյութերին ծանոթացնելու արձանագրությունը

1. Քրեական գործի նյութերին ծանոթացնելու վերաբերյալ քննիչը կազմում է արձանագրություն, որում նշում է ծանոթացնելու ժամկետը և տեղը, իր պաշտոնը, գործին ծանոթացող անձանց մասին և պաշտպանի, ինչպես նաև տուժողի, քաղաքացիական հայցվորի, քաղաքացիական պատասխանողի ներկայացուցիչների լիազորությունները վկայակոչող փաստաթղթերի մասին տեղեկություններ:

2. Գործին ծանոթացող յուրաքանչյուր անձին գործի նյութերին ծանոթացնելու մասին ~~Դատավարության յուրաքանչյուր մասնակցի գործին ծանոթացնելու մասին~~ կազմվում է առանձին արձանագրություն: Եթե պաշտպանը գործին ծանոթացել է իր պաշտպանյալի հետ միասին կամ ներկայացուցիչը գործի հետ ծանոթացել է ներկայացվող տուժողի, քաղաքացիական հայցվորի կամ քաղաքացիական պատասխանողի հետ միասին, ապա գործի հետ պաշտպանի և պաշտպանյալի, ինչպես նաև ներկայացուցչի և ներկայացվողի ծանոթանալու մասին կարող է կազմվել մեկ արձանագրություն:

3. Արձանագրության մեջ նշվում են ծանոթացման համար ներկայացված գործի հատորների և յուրաքանչյուր հատորում առկա էջերի թիվը, ինչպես նաև ներկայացված իրեղեն ապացույցները և քննչական գործողությունների արձանագրություններին կցված հավելվածները:

4. Արձանագրության մեջ նշվում են գործի հետ ծանոթանալու յուրաքանչյուր օրը, սկսելու և ավարտելու ժամանակը:

5. Արձանագրության մեջ մտցվում են քրեական գործի նյութերին ծանոթանալուց հետո հարուցված բանավոր միջնորդությունները: Գրավոր միջնորդությունները կցվում են արձանագրությանը, որի մասին նշում է կատարվում արձանագրության մեջ:

ԲԱԺԻՆ 9[2]

ՄԵՂԱԴՐՅԱԼԻ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՄԲ ԻՐԱԿԱԿԱՆԱՑՎՈՂ ՎԱՐՈՒՅԹԸ

ԳԼՈՒԽ 45[3]

ՄԵՂԱԴՐՅԱԼԻ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՄԲ ԻՐԱԿԱԿԱՆԱՑՎՈՂ ՎԱՐՈՒՅԹԸ

Հոդված 375[19]. Մեղադրյալի բացակայությամբ վարույթ իրականացնելու հիմքը և պայմանները

1. Մեղադրյալի բացակայությամբ վարույթն (այսուհետ՝ հեռակա վարույթ) իրականացվում է միայն այն դեպքում, երբ մեղադրյալը խուսափում է քրեական վարույթին մասնակցելուց:

2. Հեռակա վարույթ չի կարող իրականացվել, եթե՝

1) մեղադրյալը պատշաճ ծանուցված չէ իր նկատմամբ հարուցված քրեական հետապնդման մասին կամ վարույթին մասնակցելն անհնարին է՝ իր կամքից անկախ հանգամանքներով.

2) չեն ձեռնարկվել անհրաժեշտ և բավարար միջոցներ գործի քննությանը մեղադրյալի մասնակցությունն ապահովելու համար.

3) մեղադրյալն անչափահաս է.

4) մեղադրյալն արարքը կատարելու պահին եղել է անմեղսունակ վիճակում, կամ հանցագործությունը կատարելուց հետո հիվանդացել է հոգեկան հիվանդությամբ, որը զրկել է նրան իր գործողությունների համար իրեն հաշիվ տալու կամ այդ գործողությունները ղեկավարելու հնարավորությունից կամ առկա է մեղադրյալի՝ այդպիսի վիճակում լինելու վերաբերյալ ողջամիտ կասկած:

3. Հեռակա վարույթ իրականացնելու մասին որոշում կայացնելու պահից քրեական գործով վարույթին պաշտպանի մասնակցությունը պարտադիր է: Այս դեպքում վարույթն իրականացնող մարմինը չի ընդունում պաշտպանից մեղադրյալի հրաժարումը և սույն օրենսգրքով սահմանված կարգով նշանակում է պաշտպան կամ պահպանում է նշանակված պաշտպանի լիազորությունները:

Հոդված 375[20]. Մեղադրյալի բացակայությամբ իրականացվող նախաքննությունը

1. Սույն օրենսգրքի 375[19]-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հիմքի առկայության և նույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված պայմանների բացակայության դեպքում քննիչը որոշում է կայացնում մեղադրյալի նկատմամբ հեռակա վարույթ իրականացնելու մասին: Այդ որոշումը կարող է կայացվել մինչև նախաքննության ավարտը:

2. Հեռակա վարույթ իրականացնելու մասին որոշում կայացնելու դեպքում նախաքննությունն իրականացվում է սույն օրենսգրքով սահմանված ընդհանուր կարգով՝ հաշվի առնելով սույն գլխով նախատեսված կանոնները:

3. Հեռակա վարույթ իրականացնելու մասին որոշում կայացնելուց հետո անհապաղ քննիչն այդ որոշման պատճենն ուղարկում է հսկող դատախազին, ինչպես նաև դատավարության մասնակիցներին:

4. Հեռակա վարույթ իրականացնելու մասին որոշում կայացնելուց հետո՝ եռօրյա ժամկետում, քննիչը մեղադրյալին, իսկ դրա օբյեկտիվ անհնարինության դեպքում՝ նրա մերձավոր ազգականներից որևէ մեկին ուղարկում է տվյալ մեղադրյալի նկատմամբ հեռակա վարույթ իրականացնելու մասին որոշման պատճենը և տրամադրում տասնօրյա ժամկետ պաշտպան հրավիրելու համար, ինչպես նաև գրավոր պարզաբանում է հեռակա վարույթ իրականացնելու, և այդ ժամկետում պաշտպան չհրավիրելու հետևանքները: Այդ ժամկետում պաշտպան չհրավիրվելու դեպքում քննիչը Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատից պահանջում է փաստաբանին նշանակել պաշտպան:

5. Եթե մինչև հեռակա վարույթ իրականացնելու մասին որոշում կայացնելը մեղադրյալին մեղադրանք չի առաջադրվել, ապա մեղադրանք առաջադրելու՝ սույն օրենսգրքի 203-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված ժամկետն սկսում է հոսել սույն հոդվածի 4-րդ մասով նախատեսված կարգով քրեական գործով վարույթին պաշտպան ներգրավելու պահից:

6. Մեղադրանքն առաջադրված է համարվում որպես մեղադրյալ ներգրավելու մասին որոշումը քննությունից խուսափող մեղադրյալի պաշտպանին տրամադրելու, ինչպես նաև նրան դրա էությունը բացատրելու պահից: Այդ գործողությունների կատարումը հաստատվում է համապատասխան արձանագրությամբ, որն ստորագրում են քննիչը և պաշտպանը:

7. Մեղադրանք առաջադրելու պահից սկսած մեղադրյալի՝ սույն օրենսգրքով նախատեսված իրավունքներն իրականացվում են միայն պաշտպանի միջոցով: Մեղադրյալի անձից անբաժանելի իրավունքները չեն իրականացվում:

8. Պաշտպանը կարող է ընդունել դեպքի հետ մեղադրյալի առնչությունը կամ նրա մեղավորությունը դրա կատարման մեջ միայն այն դեպքում, երբ մեղադրյալն այդ մասին գրավոր, հստակ և պատշաճ ձևով տեղեկացրել է վարույթն իրականացնող մարմնին:

Հոդված 375[21]. Նախաքննության ընթացքում հեռակա վարույթի դադարեցումը

1. Եթե նախաքննության ընթացքում վերանում է սույն օրենսգրքի 375[19]-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հիմքը կամ առաջանում է նույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված պայմաններից որևէ մեկը, ապա քննիչը որոշում է կայացնում քրեական գործով վարույթը սույն օրենսգրքով սահմանված ընդհանուր կարգով շարունակելու մասին:

2. Քրեական գործով վարույթն ընդհանուր կարգով շարունակելու մասին որոշում կայացնելու դեպքում քննիչը դրա պատճենն անհապաղ ուղարկում է հսկող դատախազին և դատավարության մասնակիցներին:

Հոդված 375[22]. Մեղադրյալի նկատմամբ հեռակա կարգով դատական քննություն իրականացնելու մասին միջնորդությունը

1. Սույն օրենսգրքի 277-րդ հոդվածով սահմանված կարգով գործը դատարան ուղարկելիս դատախազը համապատասխան որոշման մեջ նշում է կատարում նախաքննությունը հեռակա կարգով իրականացնելու վերաբերյալ, ինչպես նաև հարուցում է միջնորդություն մեղադրյալի նկատմամբ հեռակա կարգով դատական քննություն իրականացնելու մասին, եթե չի վերացել սույն օրենսգրքի 375[19]-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հիմքը կամ չի առաջացել նույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված պայմաններից որևէ մեկը:

2. Մեղադրողի կողմից մեղադրյալի նկատմամբ հեռակա կարգով դատական քննություն իրականացնելու մասին միջնորդություն կարող է ներկայացվել քրեական գործը դատարան ուղարկելու պահից մինչև դատաքննությունն սկսվելը:

Հոդված 375[23]. Մեղադրյալի նկատմամբ հեռակա կարգով դատական քննություն իրականացնելու մասին միջնորդության լուծումը

1. Մինչև մեղադրյալի նկատմամբ հեռակա կարգով դատական քննություն իրականացնելու մասին մեղադրողի միջնորդության քննությունն սկսելը դատարանը պարզում է, թե արդյոք խուսափող մեղադրյալի պաշտպանին հանձնվել է մեղադրական եզրակացության պատճենը: Այդ փաստաթուղթը պաշտպանին հանձնված չլինելու դեպքում դատական նիստը հետաձգվում է երեք օրով՝ պաշտպանին հանձնելով մեղադրական եզրակացության պատճենը:

2. Մեղադրյալի նկատմամբ հեռակա կարգով դատական քննություն իրականացնելու մասին մեղադրողի միջնորդության քննությունն սկսվում է մեղադրողի կողմից սույն օրենսգրքի 375[19]-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հիմքի և նույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված պայմանների բացակայության մասին տվյալների ներկայացմամբ:

3. Դատարանը, լսելով կողմերի կարծիքները, բավարարում է մեղադրյալի նկատմամբ հեռակա կարգով դատական քննություն իրականացնելու մասին միջնորդությունը, եթե՝

1) առկա է հեռակա վարույթ իրականացնելու՝ սույն օրենսգրքով նախատեսված հիմքը.

2) բացակայում են հեռակա վարույթի իրականացումը բացառող՝ սույն օրենսգրքով սահմանված պայմանները.

3) հեռակա վարույթ իրականացնելու մասին որոշում կայացնելու պահին մեղադրյալն ունեցել է քրեական գործով վարույթին ներգրավված պաշտպան կամ հեռակա վարույթ իրականացնելու մասին որոշում կայացնելուց հետո պաշտպանը քրեական գործով վարույթին ներգրավվել է սույն օրենսգրքի 375[20]-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված կարգով:

4. Սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված հանգամանքներից որևէ մեկը չհաստատվելու դեպքում դատարանը որոշում է կայացնում տվյալ մեղադրյալի նկատմամբ հեռակա կարգով դատական քննություն իրականացնելը մերժելու մասին:

5. Եթե ամբաստանյալի նկատմամբ հեռակա վարույթ իրականացնելու՝ սույն օրենսգրքով նախատեսված հիմքն ի հայտ է եկել դատաքննության ընթացքում, և միաժամանակ բացակայում են հեռակա վարույթի իրականացումը բացառող՝ սույն

օրենսգրքով սահմանված պայմանները, ապա դատարանը, լսելով կողմերի կարծիքները, սեփական նախաձեռնությամբ կամ մեղադրողի միջնորդությամբ կարող է մինչև դատավճիռ կայացնելու համար խորհրդակցական սենյակ հեռանալը որոշում կայացնել ամբաստանյալի նկատմամբ հեռակա վարույթ իրականացնելու մասին: Այս որոշումը կայացնելու դեպքում վարույթը չի վերսկսվում:

Հոդված 375[24]. Մեղադրյալի նկատմամբ հեռակա կարգով իրականացվող դատական քննության և դատավճիռ կայացնելու կարգը

1. Հեռակա կարգով դատական քննությունն իրականացվում և դատավճիռը կայացվում է սույն օրենսգրքի 41-45 գլուխներով նախատեսված կարգով՝ հաշվի առնելով սույն գլխով նախատեսված առանձնահատկությունները:

2. Հեռակա կարգով դատական քննության ընթացքում ամբաստանյալի կողմից սույն օրենսգրքով սահմանված իրավունքները կարող են իրականացվել միայն պաշտպանի միջոցով: Ամբաստանյալի անձից անբաժանելի իրավունքները չեն իրականացվում:

3. Եթե մեղադրյալը նախաքննության ընթացքում, իսկ ամբաստանյալը դատական քննության ընթացքում ցուցմունք է տվել, ապա այն հրապարակվում է սույն օրենսգրքի 337-րդ հոդվածով սահմանված կարգով:

4. Եթե դատական քննության ընթացքում վերանում է հեռակա վարույթ իրականացնելու՝ սույն օրենսգրքով նախատեսված հիմքը կամ առաջանում է հեռակա վարույթի իրականացումը բացառող՝ սույն օրենսգրքով սահմանված պայմաններից որևէ մեկը, ապա վարույթը շարունակվում է ընդհանուր կարգով:

5. Սույն հոդվածի 4-րդ մասով նախատեսված դեպքում ամբաստանյալին տրամադրվում է ողջամիտ ժամկետ գործի բոլոր նյութերին ծանոթանալու համար:

Հոդված 375[25]. Հեռակա կարգով դատական քննության արդյունքում կայացված գործն ըստ էության լուծող դատական ակտի բողոքարկման առանձնահատկությունները

1. Հեռակա կարգով դատական քննության արդյունքում կայացված օրինական ուժի մեջ չմտած գործն ըստ էության լուծող դատական ակտը կարող է բողոքարկվել սույն օրենսգրքով սահմանված ընդհանուր կարգով:

2. Հեռակա կարգով դատական քննության արդյունքում կայացված օրինական ուժի մեջ մտած գործն ըստ էության լուծող դատական ակտը ամբաստանյալի կողմից կարող է բողոքարկվել սույն օրենսգրքի 398-րդ հոդվածի 3-րդ մասի 12-րդ կետով նախատեսված հիմքով, եթե նախկինում այն ամբաստանյալի կողմից նույն հիմքով բողոքարկված չի եղել:

3. Սույն օրենսգրքի 398-րդ հոդվածի 3-րդ մասի 12-րդ կետով նախատեսված հիմքով դատական ակտը բեկանելու դեպքում նոր քննության ժամանակ հեռակա կարգով դատաքննության ընթացքում հետազոտված ապացույցները չեն կարող օգտագործվել:

Հոդված 375[26]. Հեռակա կարգով դատական քննության արդյունքում կայացված գործն ըստ էության լուծող դատական ակտի ի կատար ածման առանձնահատկությունը

1. Սույն օրենսգրքի 375[25]-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված դեպքում բողոքը վերադաս դատարանի կողմից վարույթ ընդունելու դեպքում պատժի կրումը կասեցվում է:

Հոդված 376[1] . Առաջին ատյանի դատարանի դատական ակտերի բողոքարկումը

Վերաքննության կարգով բողոքարկման ենթակա են՝

1) առաջին ատյանի դատարանների՝ գործն ըստ էության լուծող օրինական ուժի մեջ չմտած դատական ակտերը.

2) առաջին ատյանի դատարանների՝ գործն ըստ էության լուծող օրինական ուժի մեջ մտած դատական ակտերն այն բացառիկ դեպքերում, երբ գործի նախորդ դատական քննության ընթացքում թույլ են տրվել նյութական կամ դատավարական իրավունքի այնպիսի հիմնարար խախտումներ, որոնց արդյունքում ընդունված դատական ակտը խաթարում է արդարադատության բուն էությունը.

2.1) առաջին ատյանի դատարանների՝ գործն ըստ էության լուծող օրինական ուժի մեջ մտած դատական ակտերը՝ նոր երևան եկած կամ նոր հանգամանքներով.

3) առաջին ատյանի դատարանների՝ գործով վարույթը կասեցնելու որոշումները.

4) առաջին ատյանի դատարանների՝ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու, փոփոխելու կամ վերացնելու, սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում՝ խուզարկության, առգրավման, բժշկական հաստատությունում անձանց տեղավորման, ինչպես նաև նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների գաղտնիության իրավունքի սահմանափակման, կասկածյալի կամ մեղադրյալի կարգավիճակ ունեցող աշխատողի լիազորությունների կասեցման վերաբերյալ որոշման իրավաչափությունը հաստատելու մասին որոշումները.

4.1)

4[2]) առաջին ատյանի դատարանի՝ հեռակա կարգով դատական քննություն իրականացնելը մերժելու մասին որոշումը.

5) առաջին ատյանի դատարանի՝ հետաքննության մարմնի աշխատակցի, քննիչի, դատախազի, օպերատիվ-հետախուզական գործողություններ իրականացնող մարմինների որոշումների և գործողությունների (անգործության) դեմ բողոքների կապակցությամբ կայացված որոշումները.

6) հանձնման մասին դատարանի որոշումները.

7) սույն օրենսգրքի 49 գլխով նախատեսված հարցերի կապակցությամբ դատարանի կայացրած որոշումները.

8) սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում՝ այլ դատական ակտեր:

(376.1-ին հոդվածը լրաց. 28.11.07 ՀՕ-270-Ն, 26.12.08 ՀՕ-237-Ն, փոփ. 05.02.09 ՀՕ-45-Ն, լրաց. 25.03.21 ՀՕ-123-Ն)

(376.1-ին հոդվածի 4-րդ կետն այն մասով, որ չի նախատեսում որպես խափանման միջոց ընտրված կալանքը փոփոխելու կամ վերացնելու միջնորդությունները մերժելու մասին որոշումների վերաքննության կարգով անմիջական բողոքարկման հնարավորություն, ճանաչվել է Սահմանադրության 27-րդ հոդվածի 5-րդ մասին, 61-րդ հոդվածի 1-ին մասին, 75 և 81-րդ հոդվածներին հակասող 06.11.19 ՍԴՈ-1487 որոշմամբ:

Սահմանադրությանը հակասող ճանաչված իրավադրույթի ուժը կորցնելու վերջնաժամկետ է սահմանվել 2020 թվականի ապրիլի 15-ը:

(հոդվածը 05.05.21 ՀՕ-200-Ն օրենքի փոփոխությամբ ուժի մեջ կմտնի 27.07.21 թվականին)

(05.05.21 ՀՕ-200-Ն օրենքն ունի անցումային դրույթ)

Հոդված 379. Վերաքննիչ բողոք բերելու ժամկետը

1. Վերաքննիչ բողոք բերվում են՝

1) առաջին ատյանի դատարանների՝ գործն ըստ էության լուծող դատական ակտերը՝ հրապարակվելու օրվանից հետո՝ մեկամսյա ժամկետում.

2) սույն օրենսգրքի 376[1] հոդվածի 2-րդ կետով նախատեսված դեպքում՝ դատական ակտը՝ օրինական ուժի մեջ մտնելու պահից վեցամսյա ժամկետում.

2.1) սույն օրենսգրքի 376.1 հոդվածի 2.1-րդ կետով նախատեսված դեպքում՝ սույն օրենսգրքի 426.3 և 426.4 հոդվածներով սահմանված ժամկետներում.

3) առաջին ատյանի դատարանի՝ կալանավորման, կալանքի ժամկետի երկարաձգման, բժշկական հաստատությունում անձանց տեղավորման, հեռակա կարգով դատական քննություն իրականացնելը մերժելու մասին որոշումները՝ հրապարակվելու պահից հնգօրյա ժամկետում, իսկ գործն ըստ էության չլուծող մյուս ակտերը՝ հրապարակվելու պահից տասնօրյա ժամկետում:

3.1)

2. ***(մասն ուժը կորցրել է 13.09.19 ՀՕ-155-Ն)***

(379-րդ հոդվածը լրաց. 25.05.06 ՀՕ-91-Ն, խմբ. 28.11.07 ՀՕ-270-Ն, լրաց. 26.12.08 ՀՕ-237-Ն, փոփ. 13.09.19 ՀՕ-155-Ն)

(379-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետն այնքանով, որքանով ժամկետային սահմանափակում է նախատեսում անձի իրավական վիճակի բարելավմանն ուղղված առաջին ատյանի դատարանի գործն ըստ էության լուծող դատական ակտի վերանայման համար, երբ գործի նախորդ դատական քննության ընթացքում թույլ են տրվել նյութական կամ դատավարական իրավունքի այնպիսի հիմնարար խախտումներ, որոնց արդյունքում ընդունված դատական ակտը խաթարում է արդարադատության բուն էությունը, ճանաչվել է Սահմանադրության 61-րդ և 63-րդ հոդվածների 1-ին մասերին, 69-րդ և 78-րդ հոդվածներին հակասող և անվավեր 23.10.2018 ՍԴՈ-1431 որոշմամբ:)

(հոդվածը 05.05.21 ՀՕ-200-Ն օրենքի փոփոխությամբ ուժի մեջ կմտնի 27.07.21 թվականին)

(05.05.21 ՀՕ-200-Ն օրենքն ունի անցումային դրույթ)

Հոդված 390. Վերաքննիչ դատարանում գործի քննության կարգը

1. Վերաքննիչ դատարանում գործերի քննությունը կատարվում է սույն գլխում շարադրված կանոններով, ինչպես նաև վճռաբեկ դատարանում գործերի քննության համար սահմանված կանոններով, բացառությամբ վճռաբեկ դատարանում բողոքի քննության գրավոր ընթացակարգով սահմանված կարգի:

2. Գործի քննության տեղի և ժամանակի մասին կողմերը ծանուցվում են:

3. Դատական նիստին պարտադիր մասնակցում են՝

1) դատախազը.

2) ամբաստանյալը, որը ներկայացրել է բողոքը, կամ որի շահերի պաշտպանության համար բողոք է ներկայացրել պաշտպանը կամ օրինական ներկայացուցիչը, կամ երբ բողոք է բերել դատախազը՝ ոչ հօգուտ դատապարտյալի.

3) պաշտպանը՝ սույն օրենսգրքի 69 հոդվածով նախատեսված դեպքերում:

4. Դատավարության մյուս մասնակիցների չներկայանալը չի խոչընդոտում գործը քննելուն և դատական ակտ կայացնելուն:

4.1.

5. Սույն օրենսգրքի 45[3]-րդ գլխով նախատեսված կարգով կայացված դատական ակտի դեմ բերված վերաքննիչ բողոքի քննությանը ամբաստանյալի չներկայանալը չի խոչընդոտում դատական ստուգումն իրականացնելուն:

(390-րդ հոդվածը խմբ., լրաց., փոփ. 28.11.07 ՀՕ-270-Ն, լրաց. 24.06.20 ՀՕ-344-Ն)

(24.06.20 ՀՕ-344-Ն օրենքն ունի անցումային դրույթ)

(հոդվածը 05.05.21 ՀՕ-200-Ն օրենքի փոփոխությամբ ուժի մեջ կմտնի 27.07.21 թվականին)

(05.05.21 ՀՕ-200-Ն օրենքն ունի անցումային դրույթ)

Հոդված 398. Քրեադատավարական օրենքի էական խախտումը

1. Քրեադատավարական օրենքի էական խախտումներ են դատական քննության ժամանակ սույն օրենսգրքի սկզբունքների և այլ ընդհանուր դրույթների խախտումները, որոնք գործին մասնակցող անձանց՝ օրենքով երաշխավորված իրավունքներից զրկելու կամ դրանցում սահմանափակելու կամ այլ ճանապարհով խոչընդոտել են գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտմանը, ազդել են կամ կարող էին ազդել գործով ճիշտ որոշում կայացնելու վրա:

2. Դատավճիռը պետք է բեկանվի, երբ դատաքննության միակողմանիությունը կամ ոչ լրիվությունը հետևանք են թույլատրելի ապացույցները գործից սխալմամբ հանելու կամ այն ապացույցների հետազոտման հարցում կողմի միջնորդությունն անհիմն մերժելու համար, որոնք կարող էին նշանակություն ունենալ գործի համար:

3. Դատավճիռը բոլոր դեպքերում ենթակա է բեկանման, եթե՝

1) գործով վարույթի կարճման կամ քրեական հետապնդման դադարեցման համար հիմքերի առկայության դեպքում առաջին ատյանի դատարանը չի կարճել վարույթը կամ չի դադարեցրել հետապնդումը.

1.1) մեղադրական դատավճիռը կայացվել է ապացույցների բավարար ամբողջությամբ չհիմնավորված խոստովանական ցուցմունքի հիման վրա.

2) դատավճիռը կայացվել է դատարանի ոչ օրինական կազմով.

3) գործը քննվել է ամբաստանյալի բացակայությամբ, բացառությամբ սույն օրենսգրքի 314.1-րդ հոդվածի վեցերորդ մասով նախատեսված դեպքի.

4) գործը քննվել է պաշտպանի բացակայությամբ, երբ նրա մասնակցությունը, համաձայն օրենքի, պարտադիր էր, կամ այլ կերպ խախտվել է մեղադրյալի՝ պաշտպան ունենալու իրավունքը.

5) դատարանում խախտվել է մայրենի լեզվից և թարգմանչի ծառայություններից օգտվելու՝ ամբաստանյալի իրավունքը.

6) անձամբ իր պաշտպանությունն իրականացրած ամբաստանյալին իրավունք չի վերապահվել մասնակցելու դատական վիճաբանություններին.

7) ամբաստանյալին չի տրվել վերջին խոսքի իրավունք.

8) խախտվել է խորհրդակցական սենյակի գաղտնիությունը.

9) գործում բացակայում է դատական նիստի արձանագրությունը.

10) դատավճռում իսպառ բացակայում է դրա նկարագրական-պատճառաբանական մասը.

11) խախտվել է գործի քննության ընդդատությունը:

12) հեռակա վարույթ իրականացնելու՝ սույն օրենսգրքով նախատեսված հիմքի բացակայության կամ հեռակա վարույթի իրականացումը բացառող՝ սույն օրենսգրքով սահմանված պայմաններից որևէ մեկի առկայության դեպքում իրականացվել է հեռակա կարգով դատական քննություն

4. Գտնելով, որ առաջին ատյանի դատարանը թույլ է տվել սույն հոդվածի երրորդ մասի 2-11-րդ կետերով նախատեսված խախտում, վերաքննիչ դատարանը բեկանում է դատավճիռը և կայացնում նոր դատավճիռ, ~~իսկ~~ 1-ին կետով նախատեսված դեպքում՝ բեկանում է դատավճիռը, կարճում է գործի վարույթը և դադարեցնում քրեական հետապնդումը, իսկ 12-րդ կետով նախատեսված դեպքում՝ բեկանում է դատավճիռը՝ գործն ուղարկելով առաջին ատյանի դատարան՝ այլ կազմով նոր քննության:.

5. Եթե առաջին ատյանի դատարանը գործով թույլ է տվել քրեադատավարական օրենքի այլ էական խախտում, վերաքննիչ դատարանը, հաշվի առնելով գործի քննության արդյունքները, փոփոխում է առաջին ատյանի դատարանի դատական ակտը կամ բեկանում է այն և գործն ուղարկում առաջին ատյանի համապատասխան դատարան՝ այլ կազմով նոր քննության:

6. Վերաքննիչ դատարանը բեկանում է դատավճիռը և գործն ուղարկում լրացուցիչ նախաքննության, եթե թույլ են տրվել քրեադատավարական օրենքի այնպիսի խախտումներ, որոնք ազդել են գործի օբյեկտիվ, բազմակողմանի և լրիվ քննության վրա և որոնք չեն կարող վերացվել դատական քննությամբ:

7. Սույն հոդվածի նորմերը տարածվում են նաև վերաքննիչ դատարանի կողմից այլ դատական ակտերը վերանայելիս այնքանով, որքանով կիրառելի են դրանց նկատմամբ:

(398-րդ հոդվածը լրաց. 25.05.06 ՀՕ-91-Ն, փոփ., խմբ., լրաց. 28.11.07 ՀՕ-270-Ն, լրաց. 05.02.09 ՀՕ-45-Ն, 10.06.14 ՀՕ-48-Ն)

(398-րդ հոդվածի 6-րդ մասի դրույթները ճանաչվել են ՀՀ Սահմանադրության 19 հոդվածին (1-ին մաս) հակասող և անվավեր 24.07.2007 ՍԴՈ-710 որոշմամբ)